

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց

1205/B34 Դիվանագիտական վարվեցողություն -1
(անգլերեն)

Որակավորման աստիճան

բակալավրի կրթական ծրագիր

Կազմեցին

դասախոսներ Մ. Մկրտչյանը և Ա. Մարտիրոսյանը

**ԵՊՀ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2015**

«Դիվանագիտական վարվեցողություն-1» (անգլերեն)

Ծրագրի ներածություն

1205/B34 Դիվանագիտական վարվեցողություն– 1 (անգլերեն) 6 կրեդիտ

Շաբաթական 6 ժամ (գործնական պարապմունքներ՝ 96 ժամ)

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել դիվանագիտական արարողակարգի կանոններին, վարվելակերպի նրբություններին, դիվանագիտական արարողակարգի շրջանակներում օգտագործվող անգլերենին բնորոշ լեզվական և ոճական առանձնահատկություններին: Դասընթացում ընդգրկված դասերը միտված են խորացնելու և ամրապնդելու դիվանագիտական արարողակարգին առնչվող լեզվական և մասնագիտական գիտելիքները, ինչպես նաև հարստացնելու ուսանողների բառապաշարը, զարգացնելու հաղորդակցական հմտություններն ու կարողությունները, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում:

Կրթական վերջնական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա

գիտելիք և իմացություն

1. դիվանագիտական արարողակարգի լեզվի և ոճի, դիվանագիտական արարողակարգի իրականացման և վարվեցողության սկզբունքների առանձնահատկությունների վերաբերյալ
2. դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև այդ հարաբերությունների հաստատման ընթացակարգի, դիվանագիտական հարաբերությունների խզման պատճառների և դրանից բխող հնարավոր հետևանքների վերաբերյալ
3. դեսպանների և նրանց հիմնական պարտականությունների և գործառույթների, դիվանագիտական ներկայացուցչի նշանակման և պարտականությունների անցման կարգի, ինչպես նաև բանակցային գործընթացը արդյունավետ վարելու համար հմտությունների, դեսպանների տեսակների, դիվանագիտական իմունիտետների և արտոնությունների վերաբերյալ

4. դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմի և կառուցվածքի, դիվանագիտական աստիճանների, դիվանագիտական կորպուսի, ինչպես նաև հյուպատոսական ծառայության, հյուպատոսական հարաբերությունների հաստատման, հյուպատոսի նշանակման կարգի և հյուպատոսական հիմնարկների գործունեության վերաբերյալ
5. արարողակարգի բաժնի գործառույթների և պարտականությունների, ինչպես նաև ավագության կարգի առանձնահատկությունների, դրոշի հետ կապված արարողակարգի վերաբերյալ
6. տիտղոսների և դիմելաձևերի, պաշտոնական այցերի և ընդունելությունների, ինչպես նաև Բլեր Հաուզի /ԱՄՆ նախագահի հյուրերի տունը/ վերաբերյալ
7. տարբեր մշակութային յուրահատկությունների, ազգային տոների վերաբերյալ:

Ունակ կլինի

(ընդհանրական կարողություններ)

1. կազմել կապակցված խոսք՝ դիվանագիտական արարողակարգին առնչվող թեմաներով
2. պատշաճ մակարդակով գրավոր վերարտադրել իր մտքերը՝ ներկայացնելով կոտ և գրագետ շարադրանք նշված թեմաների վերաբերյալ
3. ընկալել մասնագիտական ոլորտներին վերաբերող խոսքը և զրույց վարել հիշատակված թեմաների շրջանակներում

(բուն մասնագիտական կարողություններ)

1. գնահատել դիվանագիտական արարողակարգին առնչվող լեզվական գիտելիքները, դիվանագիտական արարողակարգի իրականացման և վարվեցողության սկզբունքների առանձնահատկությունները և գործնականորեն կիրառել դրանք
2. վերլուծել դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հարաբերությունների խզման պատճառները և դրանից բխող հնարավոր հետևանքները
3. գնահատել դեսպանների հիմնական պարտականություններն ու գործառույթները, բանակցային գործընթացի կարևորությունը
4. վեր հանել դիվանագիտական կորպուսի, հյուպատոսական հիմնարկների գործունեության նորմերը և յուրահատկությունները
5. սահմանել արարողակարգի բաժնի գործառույթները և պարտականությունները, ինչպես նաև ավագության կարգի առանձնահատկությունները
6. գործականորեն կիրառել տիտղոսներն ու դիմելաձևերը, պաշտոնական այցերի և ընդունելությունների ժամանակ հետևել դիվանագիտական էթիկայի կանոններին

7. գնահատել տարբեր մշակութային յուրահատկությունները, ազգային տոները, ինչպես նաև մասնագիտական թեմաներով ելույթներ ներկայացնել

Ընթացիկ քննությունների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ձևերն են՝

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Գրավոր ստուգումը իրականացվում է թեստային առաջադրանքների ձևով: Առաջադրանքները 4-ն են.

- ✓ համառոտ վերարտադրել ծրագրով նախատեսված 1-5-րդ թեմաներում ընդգրկված նյութերից 2-ը. գնահատվում է առավելագույնը 4 միավոր
- ✓ հայերեն համառոտ վերարտադրել քաղաքական բնույթի անգլերեն լրագրային հոդված. գնահատվում է առավելագույնը 1 միավոր
- ✓ անցած բառապաշարի հիման վրա հայերենից անգլերեն թարգմանել 10 նախադասություն. գնահատվում է առավելագույնը 3 միավոր
- ✓ պատասխանել հարցերի՝ ձայներիզով լսած ընդհանուր մասնագիտական բնույթի տեքստի վերաբերյալ. գնահատվում է առավելագույնը 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որոնցից 1-ին և 2-րդ հարցերը ներառում են ծրագրով նախատեսված 6-14-րդ թեմաները, որոնցից դասախոսի ընտրությամբ հարցատոմսում ընդգրկվում է հինգ թեմա և յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2.5 միավոր: 3-րդ հարցը ընդհանուր մասնագիտական թեմատիկա ընդգրկող նախորոք պատրաստած բանավոր ելույթ է. գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Role of Protocol in Diplomacy “Diplomatic Protocol” Unit 1 (4 ժամ գործնական պարապմունք)

1. The Role of Protocol
2. State Protocol of the Republic of Armenia
3. The Purposes and Rules of Protocol
4. State Protocol Service

Անցկացվում են գործնական պարապմունքներ նշված թեմաներով:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ հանձնարարված թեմաներով:

Թեմա 2. Establishing Diplomatic Relations “Diplomatic Protocol” Unit 2 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Establishing Diplomatic Relations
2. The Procedures after Establishing Diplomatic Relations
3. Diplomatic Recognition: Changes and Developments
4. The Three Major Developments after WWII

Անցկացվում են գործնական պարապմունքներ հիշատակված թեմաներով

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ հանձնարարված թեմաներով:

Թեմա 3. Ambassadors “Diplomatic Protocol” Unit 3 (10 ժամ գործնական պարապմունք)

1. Ambassadors
2. Types of Ambassadors
3. Agree´ment and Presentation of Credentials
4. Role of the Ambassador’s Spouse
5. Diplomats
6. Supplementary Reading: Types of Attache´s. Service and Specialist Attache´s. Armed Service Attache´s. Cultural and Educational Attache´s. Other Attache´s
7. The Makings of a Good Ambassador

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով, կարծիքներ են փոխանակում նշված թեմաների վերաբերյալ:

Թեմա 4. Diplomatic Corps “Diplomatic Protocol” Unit 4 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Diplomatic Corps
2. The Functions of the Dean of Corps
3. Diplomatic Corps of the RA
4. Purpose of Diplomatic Corps

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ հանձնարարված թեմաներով:

Թեմա 5. Consulates and Consular Officers “Diplomatic Protocol” Unit 5 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Consulates and Consular Officers
2. Honorary Consuls
3. The Duties of a Consular Office
4. Supplementary Reading: Vienna Convention on Consular Relations

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ տարբեր երկրների հյուպատոսությունների և հյուպատոսական հիմնարկների մասին:

Թեմա 6. Diplomatic Immunity “Diplomatic Protocol” Unit 6 (10 ժամ գործնական պարապմունք)

1. Diplomatic Immunity
2. Diplomatic Privileges and Immunities
3. Exceptions to the Vienna Conventions
4. Development of the Tradition of Immunity
5. Supplementary Reading: Diplomatic Incidents

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս կարծիքների փոխանակմամբ և ելույթներով՝ նշված թեմաների շրջանակներում:

Թեմա 7. Breaking Diplomatic Relations “Diplomatic Protocol” Unit 7 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Breaking Diplomatic Relations
2. US Breaks Diplomatic Relations with Germany
3. Iran Hostage Crisis
4. Ethiopia Breaks Diplomatic Relations with Qatar

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ դիվանագիտական հարաբերությունների խզման հնարավոր պատճառների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում են դիվանագիտական հարաբերությունների խզման օրինակներ:

Թեմա 8. Office of Protocol “Diplomatic Protocol” Unit 8 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Office of Protocol
2. Tasks of the Protocol Service
3. Diplomatic Partnerships
4. Supplementary Reading: US Chief of Protocol. State Ceremonies. Official Mourning.

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ արարողակարգի բաժնի գործառույթների վերաբերյալ:

Թեմա 9. Order of Precedence “Diplomatic Protocol” Unit 9 (10 ժամ գործնական պարապմունք)

1. Who is Most Important?
Origins of the Order of Precedence
2. Order of Precedence within Diplomatic Corps
3. Order of Precedence within Consular Corps. Order of Precedence within the Diplomatic and Consular Missions
4. Conflicts over Precedence
5. Supplementary Reading: Precedence for Officers of the Foreign Service & Other Officers of the United States Governments. Ranking Information for the United States

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ավագության կարգի վերաբերյալ կարծիքների փոխանակմամբ և ելույթներով:

Թեմա 10. Titles and Forms of Address “Diplomatic Protocol” Unit 10 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Titles and Forms of Address
2. Addressing Others
3. Making Introductions
4. Supplementary Reading: American Officials Entitled to be Addressed as The Honourable

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս կարծիքների փոխանակմամբ և ելույթներով:

Թեմա 11. Official Visits “Diplomatic Protocol” Unit 10 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Visits with the President
2. Official Visits
3. Official Working Visits or Working Visits
4. Private Visits

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով այցերի տեսակների վերաբերյալ: Հանձնարարվում է զեկույցներ ներկայացնել տարբեր երկրների պետական, պաշտոնական այցերի առանձնահատկությունների վերաբերյալ:

Թեմա 12. Blair House “Diplomatic Protocol” Unit 12 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Blair House
2. The Blairs
3. Supplementary Reading: Events. President Andrew Jackson and the “Kitchen Cabinet” (1829-1831). Blair House and World War II (1942-1956). Marshal Plan for European Reconstruction (1948). Korean War (1950-1953). Truman Assassination Attempt (1950)

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ հանձնարարված թեմաներով:

Թեմա 13. Official Entertaining “Diplomatic Protocol” Unit 13 (8 ժամ գործնական պարապմունք)

1. Official Entertaining
2. Informal Entertaining
3. Attire
4. Sequence of Events of a State Dinner in the USA
5. Table Seating Arrangements
6. Supplementary Reading: The Idea of a State Arrival Ceremony. State Dining Room

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով՝ հանձնարարված թեմաներով:

Թեմա 14. Flag Etiquette “Diplomatic Protocol” Unit 14 (6 ժամ գործնական պարապմունք)

1. Flag Etiquette
2. Facts and History of Armenian Flag
3. Facts and History of American Flag
4. Armenian Flag Etiquette. American Flag Etiquette. British Flag Etiquette
5. Appendix 1. Cultural Differences in Behaviour
6. Appendix 2. Vienna Convention on Diplomatic Relations

Անցկացվում են գործնական պարապմունքներ:

Ինքնուրույն աշխատանք. ուսանողները հանդես են գալիս ելույթներով դրոշի հետ կապված արարողակարգի վերաբերյալ: Հանձնարարվում է տարբեր երկրների դրոշների հետ կապված արարողակարգի թեմաներով ելույթներ:

Պարտադիր գրականություն

1. Մարինե Մկրտչյան, Արմենուհի Մարտիրոսյան – Diplomatic Protocol, Yerevan, YSU Press, 2013.

Լրացուցիչ գրականություն

1. Babayan, A., Reader in International Relations and Diplomatic Service. YSU Press. 2012.
2. Berridge, G.R. and James, A. A Dictionary of Diplomacy. New York: Palgrave 2001.
3. Bremner, M. Modern Etiquette. New Jersey. 1994.
4. Diplomatic Handbook – Protocol Department, Ministry for Foreign Affairs, Reykjavik, March, 2010.
5. French, M. United States Protocol: The Guide to Official Diplomatic Etiquette. 2010.
6. Freeman Ch. W, Diplomat's Dictionary. USA, 2010.
7. Grant V. McClanahan. Diplomatic Immunity Principles, Practices, Problems. Washington D.C. USA. 1989.
8. Handbook on ASEAN Protocol and Practices. (Jakarta: ASEAN Secretariat)
9. McCaffree, M.J. and Innis, P. Protocol: The Complete Handbook of Diplomatic, Official and Social Usage (25th Anniversary Edition). Washington, D.C.: Devon Publishing Company. 2002.
10. Radlovic, I.M. Etiquette and Protocol. New York. 1956.
11. Wood, J.R. and Serres, J. Diplomatic Ceremonial and Protocol: Principles, Procedures and Practices. New York. 1970.
12. Չալրվյան Ն. Դիվանագիտական Արարողակարգ և Վարվելակերպ. Երևան, 2003.
13. Չալրվյան Ն. Դիվանագիտական և Հյուպատոսական Ծառայություն և Իրավունք. Երևան, 2003.
14. Չալրվյան Ն. Դիվանագիտական վարվեցողության (Էթիկայի) կանոնները. Երևան, 2009.
15. Չալրվյան Ն. Դիվանագիտական և հյուպատոսական տերմինների անգլերեն-հայերեն բացատրական բառարան. Երևան, 2011.

Դասընթացի յուրացմանը նպաստող օժանդակ միջոցներ

1. Popular Protocol Videos <https://www.youtube.com>
2. The Art of Diplomacy <https://www.youtube.com>
3. CNN News - President Obama's Royal Protocol Gaffe <https://www.youtube.com>
4. The Greatest Speeches of All Time (տեսասկավառակներ).
5. BBC, CNN հեռուստաընկերությունների նորությունների թողարկումներ (տեսասկավառակներ).